ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2025 թվականի № 8-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով «Քրոու ընդ Ասատրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան № 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2024 թվականին իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքում՝ 2024 թվականի դեկտեմբերի 25-ին ներկայացված վերջնական հաշվետվությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան № 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2024 թվականին իրականացված աուդիտի արդյունքում հայտնաբերված խախտումները, ինչպես նաև կազմակերպության 2024 թվականի գործունեությունը՝ 2025 թվականի հունվարի 13-ից 15-ը ներառյալ ուսումնասիրելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) ***Կարեն Հունանյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

2) ***Տաթևիկ Հախվերդյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ,

3) ***Լեյլի Խաչատրյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

4) ***Թերեզա Մաթևոսյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ուսումնասիրության ավարտից հետո եռօրյա ժամկետում՝ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացնել համապատասխան տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2025 թվականի հունվարի 10
ք. Հրազդան